

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհաբանում ~~Երևանի~~  
Գերագույն Հոգևոր Խորհուրդի ~~Ժողովի~~ ժողովի  
(1994 թ. Օգոստոսի 30-ի ժամը 10-ին)

1. Աղոթք - Հոգվոց.

2. Նախորդ նիստի ատենագրության ընթերցում. — *Առևել 26 + Տաշխ 10*

3. Եպիսկոպոսաց և Գերագույն Հոգևոր Խորհրդի միացյալ ժողովի  
ատենագրության ընթերցում՝ Տեղապահի ընտրության մասին.

4. Ազգային Եկեղեցական ժողովի գումարման ուղեցույց.

5. Ֆինանսական հանձնախումբի տեղեկատվություն.

6. Վեհափառի աշխատասենյակի գույքագրում.

7. Այլ նոր հարցեր:




ԱՆԿ 29

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ՝  
18 ԵՎ 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1994, ՈՒՐԲԱԹ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 18-ԻՆ  
ԵՎ ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԸ 10.30-ԻՆ, ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աղոթք:
2. Նախորդ նիստի ատենագրության ընթերցում:
3. Արագածի շրջանի թեմական պատկանելիության հարցը:
4. Հունաստանի մեջ Կիլիկյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվազյանին դրկված նամակը:
5. Մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի խնդիրքը՝ Պոխումի ցուցահանդեսին մասնակցելու մասին:
6. Ազգային եկեղեցական ժողովի պատրաստության աշխատանքները:
7. Հայաստանի փոխնախագահ Տիար Գագիկ Հարությունյանի զեկուցումը՝ Հայաստանի Հիմնադրամի և 1700-ամյակի տոնակատարության մասին:
8. Տեղապահ Սրբազանի տեղեկատվությունը:
9. Հաջորդ նիստի թվականը:



Ս/ԿԿԿ  
200



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ՝  
 4 ՄԱՐՏ 1995 Թ. ՇԱՐԱԹ ԱՌԱՎՈՏ ԺԱՄԸ 10.30-ին ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Աղոթք:

Ընթերցում նախորդ նիստի Ատենագրության:


Թրիլիսիի Նորաշենի Ս. Աստվածածին Եկեղեցու հարց:

Եղեգնաձորի Նորավանքի տարածքի հանձնումը Հուշարձանների պահպանության վարչության տնօրինությունից էջմիածնի Կաթողիկոսության, 18 Փետրվար 1995 թ. հրամանագրով:

Ազգային եկեղեցական ժողովի հարցեր.

- . Հրավեր հոգևոր պետերի.
- . Ժողովին ներկայացվելիք Ազգային Սահմանադրության նախագիծ.
- . Տեղեկագրեր և ընտրված պատգամավորների ցանկերի նշում.
- . Բողոքագիր Իջևանի Ծխական Խորհուրդի կողմից, Իջևանի մեջ կատարված ընտրության մասին.
- . Ազգային ժողովի համար անհրաժեշտ Հանձնախմբերի նշանակում.

- Պատգամավորների ներկայության "Ստուգիչ Հանձնախումբ"
- Ժողովավարական կանոնների Հանձնախումբ
- Առաջարկների և բանաձևերի Հանձնախումբ
- Գնահատության և շնորհակալության Հանձնախումբ
- Ազգային ժողովի հետ կապված կարգադրությանց Հանձնախումբեր:



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ՝ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ  
/3 Հոկտեմբեր 1994 թ., Երկուշաբթի առավոտյան ժամը 10.30-ին/

- Աղոթք
- Նախորդ նիստի ատենագրության ընթերցում
- Ծրագրավորում հաղաչիկա Ազգային Եկեղեցական ժողովի՝

Ա. Ներկայացնել Ազգային Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն:

Բ. Կազմել ցուցակը թեմերի և համայնքների՝ սահմանների ճշտումով:

Գ. Ճշտել թիվը պատգամավորներու:

Դ. Տալ հրահանգ թեմական Պատգամավորական ժողով գումարելու /Թվական՝ թեմական ժողով գումարելու, մինչև Նոյեմբերի վերջը/:

Ե. Հաղորդել Պատգամավորներու ընտրության արդյունքները Մայր Աթոռ թեմական ժողովի ատենագրությունը ղրկելով, ընտրված պատգամավորներու և փոխանորդներու հաստատագիրներով /մինչև Դեկտեմբերի վերջը/:

Զ. Որոշել Ազգային Եկեղեցական ժողովի թվականը:

*[Handwritten signature]* և 2/11 3

Է. Տեղեկատվությունը նախողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանի՝ Մայր Աթոռի մեկ ամսվա գործունեություն և աիրող իրավիճակի մասին, լսել ի գիտություն:

*ՄԸ արևիկի նախագահի:*

*[Handwritten signature]*  
29-  
Տատուրյան



**ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԿԵՏԵՐ**

— Ուժի մէջ է այն Կանոնադրութիւնը, որ Գէորգ Զ. Կաթողիկոս հաստատած է 25 յունիս 1945-ին եւ հրատարակել տուած՝ «Էջմիածին» ամսագրի 1945 թուականի օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր միացեալ թիւին մէջ: Կարեւոր է նկատել տարբերութիւն մը որ կայ «Հայրենիք» շաբաթաթերթի մէջ հրատարակուած կանոնադրութեան օրինակին, որ կը կրէ 19 յունիս թուականը: Այդտեղ՝ քսաներկրորդ յօդուածին մէջ կը յիշուի հետեւեալը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը կատարուած է Ս. Էջմիածնի Տաճարում, սոյն կանոնադրութեան 6րդ. յօդուածի համաձայն»: Վեցերորդ յօդուածը կ'ականարկէ Կիլիկիոյ Կաթողիկոսին նախագահութեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիւանդութեան պարագային: Պաշտօնապէս հրատարակուած բնագիրը որեւիցէ ականարկութիւն չունի վեցերորդ յօդուածին: Իսկ քանի որ 6-րդ յօդուածը աւելցուած է չունի ներկայ կացութեան հետ, ի զօրու չի կրնար ըլլալ: Նախագահութեան վերաբերեալ կայ յստակ ցուցմունք 1925-ի՝ Գէորգ Ե. Կաթողիկոսի վաւերացուցած կանոնադրութեան մէջ, ուր յօդուած 23-ը ունի հետեւեալը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը կատարուած է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, նախագահութեամբ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՏԵՂԱՊԱՀԻ»: Սոյն տրամադրութիւնը կարելի է ուժի մէջ յայտարարել՝ նկատի առնելով որ 1945-ի կանոնադրութեան մէջ որեւէ նոր տրամադրութիւն չկայ նախագահութեան վերաբերեալ:

Ուրիշ կէտ մըն ալ՝ յօդուածին մէջ յիշուած է որ Տեղապահը Ազգային Եկեղեցական ժողով հրաւիրողն է: Ըստ ժողովավարական կանոններու՝ հրաւիրողը կը նախագահէ ժողովին: 1945-ին՝ ժողովին նախագահեց Գարեգին Կաթողիկոս՝ յատենի ժողովոյ հրաւերովը Ամենայն Հայոց Ազգընտիր Տեղակալին:

-- 1945 եւ 1955 թուականներու ընտրութեանց վերաբերեալ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի պաշտօնական հրատարակութեան մէջ կը տեսնուին Յատուկ կանոնադրութեան տրամադրութեանց որոշ պատշաճեցումներ ըստ ժամանակի եւ տեղական պայմաններու: Որպէս օրինակ կարելի է յիշել՝ պատգամաւոր ընտրողներու տարիքը, յստակացում եպիսկոսներու եւ առաջնորդներու վերաբերեալ, առաջնորդական փոխանորդներու մասնակցութիւնը, եւ այլ կէտեր: Նկատելի է որ Ազգային Եկեղեցական ժողովի գումարումէն առաջ եղած են այս փոփոխութիւնները եւ ապա իւրացուած՝ ժողովի կողմէ: Ասիկա ցոյց կու տայ որ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իշխանութիւնը ունի որոշ յաւելումներ, յստակացումներ եւ պատշաճեցումներ ներմուծելու եւ յապաւումներ կատարելու ներկայ կանոնադրութեան մէջ:

#### ԱՅԼ ԿԷՏԵՐ

- բազմամարդ թեմերու պարագային պատգամաւորներու առաւելագոյն թիւ սահմանել:
- Առաջնորդի փոխանորդը ի պաշտօնէ պատգամաւոր կը նկատուի<sup>6</sup>:
- Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իւրաքանչիւր թեմի առաջնորդի հետ խորհրդակցելէ ետք՝ ինք պարտի ծանուցանել թեմերու ժողովուրդին եւ շրջուելիք պատգամաւորներու թիւը:
- Աղբրէջանի, Ատրպատականի, Թեհրանի, Սպահանի եւ Յունաստանի, Դամասկոսի թեմերը ի՞նչ ձեւով պիտի մասնակցին ժողովին:

— Ըստ 1925-ի հայրապետական ընտրութեան վերաբերեալ կանոններուն՝ Կիլիկիոյ  
կաթողիկոսութենէն պէտք է ներկայանան երկու ներկայացուցիչներ միայն:

— Մեծի Տանն Կիլիկիոյ եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչները պէտք չէ,  
որ բաժանեալ թեմերէն ըլլան:

### **ՅԻՇԵՑՈՒՄ ՍՐԲԱԶԱՆԻՆ՝**

Խնդրել Ակադեմիկոս Տադէյ Սարգսեանէն, որ հրատարակութեան եւ  
անգլերէն թարգմանութեան համար մեզի տրամադրէ գէթ մէկը Մեծ  
Նղեռնի մասին այն պատմա-վաւերագրական աշխատասիրութիւններէն,  
որոնք՝ ըստ իր խօսքին՝ Գիտութիւնների Ակադեմիայի գիտաշխատողներու  
կողմէ պատրաստուած են եւ դեռ անտիպ վիճակի մէջ են: Նախընտրելի  
պիտի ըլլայ գործ մը որ վաւերագրական բնոյթ ունի: